

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2020թ. 1-ին եռամսյակ

ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ
- ✓ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ	6
Երևան	7
Գյումրի	15
Վանաձոր	17
Ալավերդի.....	19
Հրազդան	22
Արարատ	25
Ծաղկաձոր	33
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»	37
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ	39
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	40
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	44
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	47
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	52
Սևանա լիճ.....	53
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	59
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	62
ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2020 թվականի 1-ին եռամսյակում.....	65
Արաքս գետ	67
Հավելված 1.ՀՀ գետերի ջրերի որակը 2020 թվականի 1-ին եռամսյակում	70
Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտակետերը	87
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	91
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ	92
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ	92
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.....	93
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը.....	94
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ	94
Ընդհանրացված ցուցանիշներով և բնական ջրերում հաճախ հանդիպող վնասակար քիմիական նյութերի և անտրոպոգեն ծագումով նյութերի թույլատրելի սահմանային կոնցենտրացիաների նորմերը	96

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրում ներկայացված են մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի, մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն՝ 2020 թվականի 1-ին եռամսյակն ընդգրկող ժամանակահատվածի համար:

Ներկայումս մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 144 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) 100 ստորերկրյա ջրաղբյուր, ինչը ներառում է 23 շատրվանոց հորատանցք, 22 չշատրվանոց հորատանցք և 55 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ձնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 25-ի N876-Ն հրամանի:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները.

- «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային

աղտոտվածության մասին» կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:

▪ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ կատարվում են սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների ուսումնասիրություններ՝ երկու երկրների տարածքներից Արաքս գետի աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում տվյալների փոխանակում:

Տեղեկագրում օգտագործվել են հետևյալ հապավումները.

- ԸԱԱ — ընդհանուր անօրգանական ազոտ
- ԸԼԱ — ընդհանուր լուծված աղեր
- ԿՆ — կախյալ նյութեր
- ԹԿՊ₅ — թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջ
- ԹՔՊ — թթվածնի քիմիական պահանջ
- ՋԿՏ — ջրավազանային կառավարման տարածք
- ՍԹԿ — սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանց

Մ 1 : 1 350 000



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ


Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում.
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:


Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2020 թվականի 1-ին եռամսյակում վերցվել է մթնոլորտային օդի 8000 փորձանմուշ: Մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.armmonitoring.am ինտերնետային կայքում:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված մի շարք բնակավայրերում մարտ ամսվա երրորդ տասնօրյակում դիտվել է փոշով օդի աղտոտվածության մակարդակի նվազում: Այսպիսով, մինչև մարտի 22-ն ընկած ժամանակահատվածի համեմատությամբ մարտի 23-ից սկսած մինչ ամսվա վերջ փոշով աղտոտվածությունը Երևան քաղաքում նվազել է մոտ 44%-ով, Գյումրում՝ 31%-ով, Վանաձորում՝ 26%-ով, Ալավերդում՝ 51%-ով և Հրազդանում՝ 24%-ով, այնինչ Արարատ և Ծաղկաձոր քաղաքներում բարձրացել է համապատասխանաբար՝ 28%-ով և 18%-ով: Հիշեցնենք, որ փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:




Ազոտի երկօքսիդի պարունակության նվազում դիտվել է մարտի 17-31-ն ընկած ժամանակահատվածում: Մինչև մարտի 16-ն ընկած ժամանակահատվածի համեմատությամբ մարտի 17-31-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում ազոտի երկօքսիդը նվազել է մոտ 6%-ով, Գյումրում՝ 43%-ով, Վանաձորում՝ 55%-ով, Հրազդանում՝ 33%-ով, Ծաղկաձորում՝ 40%-ով, Արարատում՝ 62%-ով, Քաջարանում՝ 35%-ով: Կապան քաղաքում ազոտի երկօքսիդը նշված ժամանակահատվածի համար բարձրացել է մոտ 47%-ով, իսկ Ալավերդի քաղաքում՝ գրեթե չի փոփոխվել (1%): Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Ազոտի երկօքսիդ (NO_2)
Կոնց. (մգ/մ³)



Ծծմբի երկօքսիդի պարունակության նվազում դիտվել է մարտի 17-31-ն ընկած ժամանակահատվածում: Մինչև մարտի 16-ն ընկած ժամանակահատվածի համեմատությամբ մարտի 17-31-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում ծծմբի երկօքսիդը նվազել է մոտ 35%-ով, Գյումրում՝ 45%-ով, Վանաձորում՝ 43%-ով, Ալավերդում՝ 50%-ով, Ծաղկաձորում՝ 40%-ով, Արարատում՝ 51%-ով, Կապանում՝ 62%-ով, Քաջարանում՝ 53%-ով, Հրազդանում ծծմբի երկօքսիդի պարունակությունը գրեթե չի փոփոխվել (1%): Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Ծծմբի երկօքսիդ (SO_2)
Կոնց. (մգ/մ³)



Երևան

Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2020 թվականի 1-ին եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, սակայն ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ:

*Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները
(ակտիվ նմուշառում)*

Հունվար

Ցուցանիշ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.012	0.041 (դիտ. № 7)	120	-
Ազոտի երկօքսիդ	0.04	0.016	0.040 (դիտ. № 8)	120	1
Փոշի	0.15	0.149	0.385 (դիտ. № 18)	121	52
Գետնամերձ օզոն	0.03	0.004	0.014 (դիտ. № 1)	120	-

Փետրվար

Ցուցանիշ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.014	0.051 (դիտ. № 7)	145	1
Ազոտի երկօքսիդ	0.04	0.023	0.077 (դիտ. № 8)	145	11
Փոշի	0.15	0.134	0.368 (դիտ. № 18)	143	45
Գետնամերձ օզոն	0.03	0.004	0.012 (դիտ. № 1)	145	-




Մարտ

Ցուցանիշ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա ըստ դիտակայանների, մգ/մ³	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.010	0.042 (դիտ. № 18)	155	-
Ազոտի երկօքսիդ	0.04	0.026	0.053 (դիտ. № 8)	155	18
Փոշի	0.15	0.136	0.563 (դիտ. № 1)	151	49
Գետնամերձ օզոն	0.03	0.003	0.038 (դիտ. № 8)	155	1




*կախված մասնիկներ

**անհիդրիդ ծծմբային




Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական շրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.








Վանաձոր


Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվարին գերազանցել է համապատասխան ՍԹՎ-ն 1.2 անգամ, փետրվարին՝ 1.3 անգամ, մարտին՝ 1.5 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹՎ-ները:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.



Վանաձորի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց





Ալավերդի




Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվարին չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն, փետրվարին գերազանցել է 3.4 անգամ, մարտին՝ 2.6 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

Պատիվ նմուշառման
դիտակետեր

Ակտիվ նմուշառման
դիտակայաններ

— Գետաշին ցանց


Ճանապարհներ
և փողոցներ

Միջպետական
ճանապարհ




— *Երկաթգծեր*

☐ *Բնակավայրեր*

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)





Հրազդան




Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:

2020 թվականի 1-ին եռամսյակում Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվարին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ, փետրվար և մարտ ամիսներին՝ 1.9 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($\mu g/m^3$)




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Պայմանական նշաններ




- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար


Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվարին և մարտին չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն, հունվար ամսին գերազանցել է 1.1 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.







Կապան


Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Կապանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց





Քաջարան


Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Քաջարանի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց






Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.








Ծաղկաձոր



Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2020 թվականի 1-ին եռամսյակում Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Մթնոլորտային տեղումներ

2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 8 փորձանմուշ (ձյուն, անձրև): Վերցված փորձանմուշներում որոշվել է 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով: 1-ին եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Ամսաթիվ	Ցուցանիշ					
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
01.02-02.02.2020	6.13	21.2	2.36	0.73	2.73	1.055
05.02-06.02.2020	6.20	26.1	2.61	1.43	2.17	0.590
08.02-09.02.2020	5.84	11.1	0.88	1.21	0.55	0.012
09.02-10.02.2020	6.02	13.7	0.73	1.19	0.72	0.023
13.02-14.02.2020	6.46	32.6	1.59	1.78	2.45	1.450
01.03-02.03.2020	6.51	20.5	0.99	0.41	0.71	0.979
19.03-20.03.2020	6.29	11.2	1.43	1.48	1.27	0.417
29.03-30.03.2020	6.88	39.6	1.96	1.12	1.75	1.177



«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»

Մթնոլորտային օդ

Ամբերդի կայանում 2020 թվականի 1-ին եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($ՍԹԿ_{միջ.}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել ՍԹԿ-ները:

Մթնոլորտային օդում ամոնիակի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Մթնոլորտային տեղումներ

2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 4 փորձանմուշ (ձյուն և անձրև): Վերցված փորձանմուշներում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով: 1-ին եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Ամսաթիվ	Ցուցանիշ					
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
14.03.2020	6.38	42.1	6.099	1.0166	6.576	1.677
16.03-17.03.2020	6.05	18.0	3.163	0.2523	1.959	0.784
17.03-18.03.2020	5.57	22.2	4.517	0.1849	2.134	0.882
29.03-30.03.2020	6.43	11.1	1.054	0.3451	0.447	0.269

ՄԱԿԵՐՆԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Հատկապես վտանգավոր են տաք հոսքաջրերը, որոնք փոխում են ջրավազանի ջերմային ռեժիմը, վատթարացնում ձկների ձվադրության պայմանները, ոչնչանում են մի շարք օգտակար մանրէներ և զարգանում են մակարոյծներ: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2020 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 36 գետի, Ախուրյանի, Երևանյան լճի, Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան թունելի և Սևանա լճի դիտակետերում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրաղբյուրներում, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 33 չշատրվանող հորատանցք և 43 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Սպիտակ քաղաքից ներքև փետրվար ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտ ամսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վանաձոր քաղաքից վերև փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Այրում քաղաքից վերև ջրի որակը փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում փետրվար և մարտ ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում մարտ ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում փետրվար ամսին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս):


Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև փետրվար ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Դիլիջան քաղաքից ներքև փետրվար ամսին գետի ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից վերև փետրվար ամսին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից ներքև հատվածում գետի ջրի որակը փետրվար ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):










Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացվում են գրաֆիկների տեսքով:




ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Բաղարներ
- Բնակավայրեր
- ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Պոչամբարներ
- Մարքման կայաններ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս





Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ախտության գետի ջրի որակը Գյումրի քաղաքից վերև մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս): Բազարան գյուղից ներքև մարտ ամսին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտ ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հունվար և փետրվար ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ռանչյար գյուղից ներքև հատվածում գետի ջրի որակը հունվար և փետրվար ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախտությանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրություն, 6 շատրվանող և 16 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացված են գրաֆիկների տեսքով:

Բնադրյուններ

Ախուրյանի ՋԿՏ


Ծախս, լ/վ



Շատրվանոց հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ


Ծախս, լ/վ



Չշատրվանոց հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ


Մակարդակ, մ





Գրունտային ջրհորներ

Ախուրյանի ՋԿՏ

Մակարդակ, մ



ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▶ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հունվար և փետրվար ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ հունվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև հունվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), փետրվարին՝ «անբավարար» (4-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև հունվար և մարտ ամիսներին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), փետրվարին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):




Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» 3-րդ դաս):

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):










Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացված են գրաֆիկների տեսքով.




Շատրվանոցի հորատանցքեր
Ծախս, լ/վ

Հրազդանի ՋԿՏ




Չշատրվանոցի հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ





Գրունտային ջրեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ



ՀՀ Հրագրանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- ▶ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Պոչամբարներ
- Մաքրման կայաններ
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Մեանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Ջկնագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):




Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանոդ հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ներկայացված են գրաֆիկների տեսքով:






Սևանա լիճ

2020 թվականի 1-ին եռամսյակում Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճից վերցված փորձանմուշներում, ձկնատնտեսական նորմերի գնահատման համաձայն, երեք ամիսների ընթացքում ՍԹԿ-ն գերազանցել են թթվածնի քիմիական պահանջարկի, ցինկի, պղնձի, քրոմի, վանադիումի և սելենի կոնցենտրացիաները: Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները դիտվել են թույլատրելի կոնցենտրացիաների սահմաններում:


Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի

պարունակությունները.


Մեանա լիճճափվող գետեր (գետաբերաններ)






Մեանա լիճճափվող գետեր (գետաբերաններ)






Մեանա լիճճափվող գետեր (գետաբերաններ)



Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.





Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2020 թվականի հունվարին

Դիտակետի համար	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)						
	Թթվածնի 5-օրյա կենսաբիոհական պահանջարկ, ՍԹԿ=3 մգ/լ	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Յինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Մեծ Սևան, 0.5մ խորություն	1.3	1.2	–	1.2	3.6	7.4	2.9
Մեծ Սևան, 5մ խորություն	1.2	1.3	–	–	–	7.2	2.6
Մեծ Սևան, 10մ խորություն	–	1.2	4.0	5.0	4.6	7.1	2.1
Մեծ Սևան, 20մ խորություն	1.2	–	–	1.9	5.0	7.1	1.9
Մեծ Սևան, 25մ խորություն	–	1.3	–	1.8	4.3	7.2	1.9
Մեծ Սևան, 30մ խորություն	–	1.2	–	1.8	1.7	6.7	1.6
Փոքր Սևան, 0.5մ խորություն	–	1.3	–	1.6	3.7	6.4	2.1
Փոքր Սևան, 5մ խորություն	–	1.2	1.3	2.8	2.3	7.0	3.0
Փոքր Սևան, 10մ խորություն	–	1.2	–	2.0	1.8	7.2	2.8
Փոքր Սևան, 20մ խորություն	–	1.2	–	2.0	2.4	7.1	2.8
Փոքր Սևան, 30մ խորություն	–	1.3	–	1.5	–	7.4	2.7
Փոքր Սևան, 55մ խորություն	–	1.2	–	1.8	–	7.3	2.9
Փոքր Սևան, 70մ խորություն	–	1.2	–	2.0	2.8	7.4	2.6
Փոքր Սևան, 79մ խորություն	–	1.3	–	1.6	–	7.3	2.6

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր



Արփա գետի ջրի որակը Վայք քաղաքից վերև և ներքև հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում մարտին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արփա-Սևան թունելի ջրի որակը Ծովինար գյուղից վերև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնադրություն, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար՝ ըստ դիտակետերի, ներկայացված են գրաֆիկների տեսքով:





ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը (մարտ/ 2020 թվական)



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը մարտ ամսին Քաջարան քաղաքից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Քաջարան քաղաքից ներքև և Կապան քաղաքի օդանավակայանից ներքև գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Կապան քաղաքից վերև՝ «անբավարար» (4-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը մարտ ամսին Գորայք գյուղից վերև, Սիսիան քաղաքից ներքև և Տաթև ՀԷԿ-ից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից վերև՝ «լավ» (2-րդ դաս):


Սիսիան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը մարտ ամսին Գորիս քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կոնց. (մգ/լ)

Մոլիբդեն


Ողջի գետ




Կոնց. (մգ/լ)

Պղինձ

Ողջի գետ








Ամիսներ

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:






ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը (մարտ / 2020 թվական)



ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2020 թվականի 1-ին եռամսյակում

Երևանյան լճի ջրի որակը հունվար և փետրվար ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ախուրյանի ջրամբարի ջրի որակը մարտ ամսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Կեչուտի ջրամբարի ջրի որակը մարտ ամսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



Հունվար

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԼՍԱ	3-րդ	3-րդ

Փետրվար

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹԿՊ ₅ , ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Մարտ



Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
